600.0328.23.11.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2016 թվականի №328Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի №373Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՏԱՎՈՒՇ-ՏՎ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2011 թվականի օգոստոսի 3-ի «ՏԱՎՈՒՇ-ՏՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №373Ա որոշմամբ «ՏԱՎՈՒՇ-ՏՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0951 թույլտվությունը, սակայն Ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին վերջինս բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 4-ի №ԱԲ-544Հ, հուլիսի 6-ի №ԱԲ-1373Հ և հոկտեմբերի 5-ի №ԱԲ-1950Հ գրություններով,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ և 10-րդ մասերի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն Օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

գ) Ընկերության կողմից Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2016 թվականի նոյեմբերի 1-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 1-ի №ԱԲ-2125Հ գրությամբ,

դ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, ինչպես նաև չի վճարել մինչև 2016 թվականի նոյեմբերի 2-ը հաշվարկված հարյուր երեք հազար ութ հարյուր հիսունչորս դրամ պարտքը, որից յոթանասունինը հազար երեք հարյուր քառասունութ դրամը ռադիոհաճախա-կանությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ քսանչորս հազար հինգ հարյուր վեց դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը,

ե) 2016 թվականի նոյեմբերի 2-ին Ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ ռադիոհաճախականությունների օգտագործման №0951 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սույն թվականի նոյեմբերի 2-ից ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 3-ի «ՏԱՎՈՒՇ-ՏՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №373Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականութ-յունների օգտագործման N0951 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճա-խականությունների օգտագործման պարտադիր վճարների մասով մինչև 2016 թվականի նոյեմբերի 2-ը հաշվարկված հարյուր երեք հազար ութ հարյուր հիսունչորս դրամ պարտքը, որից յոթանասունինը հազար երեք հարյուր քառասունութ դրամը ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարն է, իսկ քսանչորս

հազար հինգ հարյուր վեց դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:

3. Ընդունել ի գիտություն, Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
23 նոյեմբերի 2016թ.